

և համակարգեր
systeme.
բանական
բանական
բանական



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿԱՆԱՆՑ
ՀԻՄՆԱԳՐԱՄ

ԳՈՐԾԵՆԿԵՐ- ՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ 2025



Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
Հայաստանում կանանց հիմնադրամի մասին Ինչ է գործընկերությունը	
.....	
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	4
Նպատակը և խնդիրները	
Մեթոդ	
Նմուշառում	
.....	
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	6
Գործընկերների պրոֆիլը (համեմատությունը տարիների կտրվածքով)	
Գործընկերության գնահատում	9
Գործընկերության մոտեցումների լավագույն փորձը	15
Ինչն է մոտիվացնում գործընկերներին	18
Ծրագրերի գնահատում	20
Հաջողության պատմություններ	22
Քաղաժ դասեր	27
Մարտահրավերներ և բարելավման առաջարկներ	28
Ապագա գործընկերության ակնկալիքներ	31
.....	
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	34
.....	
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	36

ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում կանանց հիմնադրամի մասին

Հիմնադրված 2018 թվականին՝ Հայաստանում կանանց հիմնադրամը տեղական դրամաշնորհային կազմակերպություն է, որն աջակցում է Հայաստանում կանանց և աղջիկներին՝ կարողությունների զարգացման, ֆինանսական աջակցության և ֆեմինիստական շարժման զարգացման միջոցով:

Հիմնադրամի առաքելությունն է աջակցել Հայաստանում կանանց շարժման կառուցմանը՝ կանանց կազմակերպություններին, կանանց նախաձեռնություններին, ֆեմինիստ ակտիվիստներին, հետազոտողներին և գիտնականներին տրամադրելով անհրաժեշտ ռեսուրսներ և գործիքներ՝ կանանց իրավունքների և ֆեմինիստական նախագծերի առաջմղման իրենց գաղափարները մշակելու և իրականացնելու համար:

Հիմնադրամի նպատակն է զարգացնել կայուն ֆեմինիստական ֆիլանթրոպիա՝ աջակցելու ֆեմինիստական դիսկուրսի, անվտանգ տարածքների և կոլեկտիվ նախաձեռնությունների ամրապնդմանը, որոնք ուղղված են այսօր Հայաստանում կանանց և աղջիկների առջև ծառացած հիմնական մարտահրավերներին:

Իր հիմնադրման օրվանից Հիմնադրամին հաջողվել է համախմբել բազմաթիվ հետաքրքիր ծրագրեր, ստանալ բազմաթիվ առաջարկներ, աջակցել ավելի քան 330 ծրագրի, անցկացնել կարողությունների զարգացման մի շարք սեմինարներ կանանց համար տարբեր խմբերի՝ հասնելով ավելի քան 150 հազար կանանց և աղջիկների:

Ինչ է գործընկերությունը

Հանրային ոլորտում գործընկերությունը երկարաժամկետ հարաբերություն է երկու կամ ավելի կազմակերպությունների միջև, որոնք ունեն փոխադարձ համաձայնեցված նպատակներ և կիսում են նմանատիպ սկզբունքներ, արժեքներ և հաշվետվողականություն: Գործընկերության նկարագրությունները կարող են շատ լայն լինել և տարբերվել կազմակերպությունից կազմակերպություն: Երկու կազմակերպությունների միջև գործընկերության բնույթը հիմնականում փոխկապակցված է նրանց առաքելությանը, տեսլականին և ուղղության առանձնահատկություններին:

Հայաստանում կանանց հիմնադրամի համար գործընկերության տեսակներն ուղղակիորեն կապված են Հիմնադրամի գործընկերների հետ փոխգործակցության նպատակի և բնույթի հետ: Այսպիսով, կարելի է առանձնացնել գործընկերության երեք հիմնական տեսակ.

- Դրամաշնորհային – երբ կազմակերպությունները համատեղ իրականացնում են ծրագիր, կամ Հիմնադրամը տրամադրում և վերահսկում է այլ նախաձեռնությունների կամ կազմակերպությունների ենթադրամաշնորհային ծրագիրը՝ այդպիսով ինքնաբերաբար գործընկերության մեջ մտնելով: Այս տեսակի գործընկերության հետ կապված են դրամաշնորհային հարաբերությունները:
- Ռազմավարական – գործընկերության այս տեսակը նշանակում է, որ գործընկերները ներդրումներ են կատարում միմյանց կարողությունների և հնարավորությունների մեջ՝ ընդհանուր առաքելությանը հասնելու համար՝ իրենց գործի համար ավելի լավ պայմաններ ապահովելու նպատակով: Այս տեսակի գործընկերության համար առավել բնորոշ են հուշագրային հարաբերությունները:
- Ցանցային – գործընկերության այս տեսակը ենթադրում է համատեղ ադվոկացիոն գործունեություն, արշավներ անելու և հաղորդակցություն անել: Այս հատուկ գործընկերության համար բնորոշ են ավելի ոչ ֆորմալ հարաբերությունները:

Հիմնադրամի համար գործընկերության ամենատարածված տեսակը դրամաշնորհային գործընկերությունն է: Հավատարիմ մնալով իր առաքելությանը՝ Հիմնադրամը տրամադրում է տարբեր ենթադրամաշնորհներ տարբեր կազմակերպությունների, նախաձեռնությունների, խմբերի և անհատներին, որոնք աշխատում են գենդերային հարցերի, ֆեմինիստական մոտեցումների և կանանց իրավունքների ուղղությամբ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Նպատակը և խնդիրները

Գործընկերության գնահատման նպատակն էր ուրվագծել Հիմնադրամի և ենթադրամաշնորհային խմբերի միջև հաստատված գործընկերային հարաբերությունների ուժեղ և թույլ կողմերը:

Գնահատման հիմնական խնդիրներն էին՝

- Բացահայտել գործընկերների բավարարվածության մակարդակը Հիմնադրամի հետ գործընկերությունից,
- Բացահայտել հաստատված գործընկերության մարտահրավերները և բարելավման ոլորտները,

- Ուրվագծել ներգրավված կողմերի ապագա գործընկերային ասպեկտներն ու կարիքները,

Մեթոդ

Գնահատման նպատակներին հասնելու համար Հիմնադրամի գործընկերների հետ իրականացվել է կիսաստանդարտացված գնահատում: Հարցաթերթիկը բաղկացած է եղել երեք բաժնից և ընդհանուր առմամբ 15 հարցից (ինչպես փակ, այնպես էլ բաց): Գործընկերներին տրամադրվել ենն առցանց հարցաթերթիկներ, որոնք մշակվել էին google-form առցանց հարթակում: Հարցաթերթիկը լրացման հնարավորություն է ունեցել ամբողջ տարվա ընթացքում:

Նմուշառում

Հաշվի առնելով գնահատման առանձնահատկությունները՝ այս գնահատման համար կիրառվել է նպատակային նմուշառում՝ միատարր մոտեցմամբ: Միատարր նմուշառման մոտեցումն այն է, երբ նմուշառման միավորներն ընտրվում են՝ ելնելով նրանից, որ նրանք ունեն նմանատիպ բնութագրեր, քանի որ այդպիսի բնութագրերը առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում հետազոտողի համար: Այս կոնկրետ գնահատման համար նմանատիպ բնութագիրը Հիմնադրամի հետ գործընկերային հարաբերություններն էին: Ընդհանուր առմամբ՝ 2025թ. առցանց հարցաթերթիկը լրացրել է 22 գործընկեր: Նախորդ տարիներին հարցաթերթիկը լրացրած գործընկերների թիվը ներկայացված է ստորև:

Գնահատման տարի	2025	2024	2026	2022	2020
Գնահատմանը մասնակցած գործընկերների թիվ	22	29	32	18	28

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Գործընկերների պրոֆիլը (համեմատությունը տարիների կտրվածքով)

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս այն գործընկերների պրոֆիլը, որոնք յուրաքանչյուր տարում լրացրել են գնահատման ձևաթուղթը: Նշում. շատ գործընկերներ համագործակցել են Հիմնադրամի հետ տարիների ընթացքում և ամեն տարի լրացրել են գործիքը:

Աղյուսակ 1. Գործընկերների պրոֆիլը նախորդ տարիների համագործակցության ժամանակահատվածում

Գնահատման տարի Կատեգորիա	2025	2024	2026	2022	2020
Գործընկերների կարգավիճակ	21 ՀԿ 1 չգրանցված նախաձեռնություն	22 ՀԿ 5 չգրանցված նախաձեռն. 2 անհատ	23 ՀԿ 10 անհատ 1 չգրանց. նախաձեռն.	9 ՀԿ 8 անհատ 1 չգրանց. նախաձեռն.	19 ՀԿ 6 անհատ 3 չգրանց. նախաձեռն.

Գործընկերների փորձ	ՀԿ-ների կեսն ուներ 10 տարուց ավելի փորձ, մեկ քառորդը՝ 5-9 տարի, մյուսները՝ 5 տարուց պակաս: Նախաձեռնությունը ձևավորվել էր մինչև 3 տարի առաջ:	ՀԿ-ների մեծ մասն ուներ մոտավորապես 1-5 տարվա կամ 10 տարուց ավելի փորձ ուղորտում:	ՀԿ-ների մեծ մասն ուներ մոտավորապես 1-5 տարվա կամ 10 տարուց ավելի փորձ ուղորտում: Ծրագրերի տևողությունը եղել է 1-5 տարի:	ՀԿ-ներն ունեին մոտավորապես 3-5 տարվա փորձ ուղորտում: Նախաձեռնության տևողությունը ընդամենը մի քանի ամիս էր:	ՀԿ-ներն ունեին 1-5 տարվա փորձ: Նախաձեռնությունների տևողությունը մի քանի ամսից մինչև մեկ տարի էր:
Գործընկերների աշխարհագրություն	Գործընկերների կեսը (21-ից 9-ը) գտնվում էր Երևանում, մյուսները՝ Շիրակ, Լոռի, Տավուշ, Գեղարքունիք, Սյունիք, Արարատ, Վայոց ձոր:	Գործընկերների կեսը (29-ից 13-ը) գտնվում էր Երևանում, մյուսները՝ Շիրակ, Լոռի, Տավուշ, Գեղարքունիք, Սյունիք, Արարատ, Արմավիր, Արագածոտն, Վայոց ձոր:	Գործընկերների կեսը (32-ից 16-ը) գտնվում էր Երևանում, մյուսները՝ Սյունիք, Լոռի, Շիրակ, Տավուշ, Կոտայք, Գեղարքունիք, Վայոց ձոր:	Գործընկերների մեծ մասը (18-ից 10-ը) գտնվում էր Երևանում, մյուսները՝ Շիրակ, Տավուշ, Լոռի, Արմավիր:	Շիրակի, Լոռու մարզերը և Երևանը ներկայացված էին 6-7 գործընկերներով, երեք գործընկեր՝ Արարատից, իսկ մնացած վեց մարզերը՝ մեկական գործընկերով:
Միջամտության վայրերը	• Երևան • Արարատ • Գեղարքունիքի • Կոտայք • Վայոց ձոր • Շիրակի • Լոռի • Տավուշ • Սյունիք	• Երևան և հարակից տարածքներ • Վայոց ձոր • Շիրակ • Լոռի • Տավուշ • Սյունիք • Գեղարքունիք • Կոտայք • Արմավիր • Արարատի	Գնահատված չէ	Գնահատված չէ	Գնահատված չէ

Համագործակցության ոլորտը ՀԿՀ-ի հետ

Պատասխաններն արտացոլում են Հայաստանում կանանց հիմնադրամի հետ համագործակցությամբ իրականացվող գործունեության լայն, բայց հստակ փոխկապակցված շրջանակը: Տվյալների ամբողջության մեջ կազմակերպությունների մեծ մասն իրենց աշխատանքը դիրքավորում է կանանց իրավունքների, գենդերային հավասարության և իրավական աջակցության ոլորտում, որը հաճախ զուգորդվում է գենդերային բռնության դեմ պայքարի ջանքերով՝ ներառյալ ինչպես իրազեկման բարձրացումը, այնպես էլ տուժածներին/վերապրածներին ուղղակի աջակցությունը:

Միաժամանակ, մեծ շեշտ է դրվում կանանց հզորացման վրա, որն արտահայտվում է կարողությունների զարգացման, տնտեսական հզորացման և կազմակերպական դիմակայունության աջակցության միջոցով: Այս ջանքերը հաճախ գործում են համայնքային և իրազեկման բարձրացման նախաձեռնությունների հետ համատեղ: Առանձնահատուկ ուղղություն է Արցախից բռնի տեղահանված կանանց աջակցությունը, որտեղ գործունեությունը տարածվում է իրազեկումից դուրս՝ ավելի ինտենսիվ ներգրավվածության՝ ներառյալ հոգեսոցիալական աջակցության, սոցիալական ինտեգրման և հմտությունների զարգացման մեջ: Զուգահեռաբար, որոշ կազմակերպություններ ներառում են առողջապահական բաղադրիչներ, հատկապես սեռական և վերարտադրողական առողջության, ինչպես նաև խոցելի խմբերի, օրինակ՝ LGBS+ անձանց նպատակային աջակցության ոլորտում:

Ընդհանուր առմամբ՝ պատասխանները ցույց են տալիս, որ համագործակցությունը չի սահմանափակվում մեկ թեմատիկ ոլորտով, այլ բնութագրվում է բազմաշերտ և համընկնող միջամտություններով, որտեղ ադվոկացիան, ծառայությունների մատուցումը և հզորացումը հաճախ իրականացվում են միաժամանակ: Սա արտացոլում է ինչպես շահառուների կարիքների բարդությունը, այնպես էլ գործընկեր կազմակերպությունների աշխատանքի հարմարվողական բնույթը:

Գործընկերության գնահատում

Ինչպես նշվեց վերևում, Հայաստանում կանանց հիմնադրամը համագործակցում է տեղական ՀԿ-ների, նախաձեռնությունների և անհատների լայն շրջանակի հետ՝ երկակի նպատակին հասնելու համար՝ (1) ամրապնդել և աջակցել ոլորտի դերակատարներին և (2) խթանել ֆեմինիստական նախաձեռնությունների իրականացումը Հայաստանում՝ իր առաքելության և տեսլականի համաձայն: Նման գործընկերությունները ենթադրում են համատեղ պատասխանատվություն, որտեղ երկու կողմերն էլ նպաստում են արդյունավետ համագործակցության և կատարված աշխատանքից ընդհանուր բավարարվածության ապահովմանը:

Այս գործընկերություններից բավարարվածության մակարդակը գնահատելու համար հարցման մասնակիցներին տրվել են մի շարք հարցեր՝ կենտրոնացած Հիմնադրամի հետ փոխգործակցության իրենց փորձի վրա: Իրենց համագործակցությունը նկարագրելիս հարցվողներն ընտրել են մեկ տարբերակ հինգ բալանոց սանդղակից (պատկերված համապատասխան աստղիկներով գնահատականներով, որոնք արտացոլում են բավարարվածության մակարդակները): Նախորդ տարիների համապատասխանությամբ արդյունքները ցույց են տալիս չափազանց դրական միտում. 2025 թվականի գնահատումը կատարած 22 գործընկերներից 19-ը հայտնել են, որ շատ գոհ են և ոգևորված են Հիմնադրամի հետ իրենց համագործակցությունից:

Գործընկերությունը բնութագրող հատկանիշները

Հիմնադրամի հետ գործընկերության բնույթի ավելի համապարփակ պատկերացում կազմելու, ինչպես նաև համագործակցության առավել գնահատված կողմերն ուրվագծելու համար՝ հարցվողները գնահատել են ստորև թվարկված կոնկրետ ասպեկտները.

- Հիմնադրամի՝ առաջացող խնդիրների համար նորարարական լուծումներ տրամադրելու կարողությունը,
- գործընկերների կարիքներն ու տեսակետները հաշվի առնելու կարողությունը,
- ծրագրերի շրջանակում գործընկերների առջև ծառացած կարիքներին և մարտահրավերներին արձագանքելու և դրանք լուծելու կարողությունը,

- գործընկերներին խրախուսելու և մոտիվացնելու կարողությունը,
- տարբեր կարծիքների քննարկման համար փոխադարձ բաց հարթակ ստեղծելու կարողությունը,
- գործընկերների կարողությունների զարգացման մոտեցումները,
- գործընկերների միջև արդյունավետ հաղորդակցություն ստեղծելու կարողությունը:

Միջին հաշվով՝ գործընկերների կեսից ավելին հակված էր վերը նշված բոլոր ասպեկտները գնահատելու որպես «Գերազանց» կամ «Լավ»: Տարբեր կարծիքների քննարկման համար փոխադարձ բաց հարթակ ստեղծելու կարողությունը (97%) և ճկունությունն ու նվազագույն պահանջները հաշվետվությունների մշակման և ներկայացման ժամանակ (93%) այն երկու պատասխաններն էին, որոնք ավելի հաճախ էին առանձնացվում որպես գերազանց՝ Հիմնադրամի՝ որպես գործընկերոջ մյուս կարողությունների համեմատ: Մյուս բաղադրիչների մանրամասները ներկայացված են ստորև՝ Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. 2025 թվականին Հիմնադրամը բնութագրող հատկանիշները՝ ըստ գործընկերների պատասխանների

2025թ. Հիմնադրամը բնութագրող հատկանիշներ	Գերա- զանց	Լավ	Միջին	Բավ- արար	Ան- բավ- արար	Չգի- տեմ
... առաջացող խնդիրներին նորարարական լուծումներ տրամադրելու կարողություն	81%	19%	0%	0%	0%	0%
... գործընկերների կարիքներն ու տեսակետները հաշվի առնելու կարողություն	86%	14%	0%	0%	0%	0%
... ծրագրերի շրջանակում գործընկերների առջև ծառացած կարիքներին և մարտահրավերներին արձագանքելու և դրանք լուծելու կարողություն	95%	5%	0%	0%	0%	0%
... գործընկերներին խրախուսելու և մոտիվացնելու կարողություն	90%	10%	0%	0%	0%	0%
... տարբեր կարծիքների քննարկման համար փոխադարձ բաց հարթակ ստեղծելու կարողություն	90%	10%	0%	0%	0%	0%
... գործընկերների կարողությունների զարգացման մոտեցումներ	86%	14%	0%	0%	0%	0%
... գործընկերների միջև արդյունավետ հաղորդակցություն ստեղծելու կարողություն	77%	23%	0%	0%	0%	0%
... ճկունությունը և նվազագույն պահանջները հաշվետվությունների մշակման և ներկայացման ժամանակ	95%	5%	0%	0%	0%	0%
... գործընկերների ինքնախնամքի և կոլեկտիվ խնամքի վրա կենտրոնանալու կարողություն	86%	9%	0%	5%	0%	0%

Գծապատկեր 1-ը ներկայացնում է երկայնական պատկեր, թե ինչպես են գործընկերները գնահատել Հիմնադրամի հիմնական բնութագրերը հինգ տարվա ընթացքում (2020–2025): Ընդհանուր առմամբ՝ տվյալներն արտացոլում են բոլոր չափումներում հետևողականորեն ուժեղ կատարողականություն՝ որոշ տատանումներով, որոնք օգտակար պատկերացում են տալիս աճի և կայունացման ոլորտների վերաբերյալ: Կարևոր է նշել, որ տարիների ընթացքում հարցվողները տարբեր կազմակերպություններ էին, որոնք աշխատել են Հիմնադրամի հետ տարբեր ֆինանսավորման և ծրագրային ուղղությունների շրջանակում: Հետևաբար, սա չի ներկայացնում համեմատության համար մեկ համախումբ ժամանակի ընթացքում, այլ ավելի շուտ՝ տարբեր դերակատարների ընկալումները նմանատիպ գործընկերային հարաբերություններում՝ Հիմնադրամի տարբեր ասպեկտների վերաբերյալ:

Բոլոր տարիների ընթացքում ցուցանիշների մեծ մասը մնում է բարձր միջակայքում (ընդհանուր առմամբ՝ 70–95%), ինչը վկայում է Հիմնադրամի աշխատանքի նկատմամբ կայուն դրական ընկալումների մասին: Այս հետևողականությունը ենթադրում է, որ կազմակերպությունը ժամանակի ընթացքում պահպանել է որակի և վստահության կայուն մակարդակ իր գործընկերների շրջանում:

Ամենավերջին տարին (2025) ցույց է տալիս առանձնահատուկ ուժեղ և հավասարակշռված արդյունքներ կատեգորիաների մեծ մասում, ինչը վկայում է հասուն և լավ հաստատված գործառնական մոդելի մասին:

Վերանայված տարիների ընթացքում ամենաուժեղ կատարողական ոլորտներից են Հիմնադրամի՝


- գործընկերների կարիքներին և մարտահրավերներին արձագանքելու և
- գործընկերներին խրախուսելու և մոտիվացնելու կարողությունները:

Այս ցուցանիշները ցույց են տալիս հստակ աճի միտում ավելի վաղ տարիներից (հատկապես 2020–2022) մինչև ավելի ուշ տարիներ՝ հասնելով գագաթնակետին 2023–2025 թվականներին (մոտավորապես 90–95%): Սա ենթադրում է, որ Հիմնադրամը ժամանակի ընթացքում զգալիորեն ամրապնդել է իր գործընկերակենտրոն մոտեցումն ու արձագանքելու կարողությունը:

Տարբեր կարծիքների քննարկման և բաց երկխոսության հարթակ ստեղծելու կարողությունը մեկ այլ հետևողականորեն ուժեղ ոլորտ է: Թեև 2022թ. նկատվում է փոքր անկում, ցուցանիշը հետագա տարիներին վերականգնվում է՝ 2024թ. կրկին հասնելով բարձր մակարդակների և 2025թ. մնալով ուժեղ:

Սա արտացոլում է Հիմնադրամի շարունակական հանձնառությունը ներառական երկխոսության և մասնակցային ներգրավվածության նկատմամբ, որը համահունչ է իր ֆեմինիստական և հորիզոնական մոտեցմանը:

Գծապատկեր 1. Երկայնական վերլուծություն. Հիմնադրամի բնութագրերի գնահատումը 5 տարվա ընթացքում (2020-2025)



Առաջացող խնդիրների համար նորարարական լուծումներ տրամադրելու կարողությունը ցույց է տալիս ավելի մեծ փոփոխականություն՝ համեմատած այլ ցուցանիշների հետ: Թեև այն զգալիորեն բարելավվում է 2022 թվականից (մոտ 50%) մինչև հետագա տարիներ (80%-ից բարձր), 2025թ. կրկին նկատվում է փոքր անկում: Դա կարող է ցույց տալ.

- գործընկերների զարգացող ակնկալիքները կամ
- փոփոխվող համատեքստերում նորարարական մոտեցումները շարունակաբար հարմարեցնելու անհրաժեշտությունը:

Նմանապես, գործընկերների միջև արդյունավետ հաղորդակցություն ստեղծելու կարողությունը ցույց է տալիս որոշակի տատանումներ՝ 2025 թվականին 2024 թվականի համեմատ անկումով, թեև մնալով համեմատաբար ուժեղ միջակայքում:

Այս տատանումները հուշում են, որ թեև կատարողականությունը հիմնավոր է, այս ոլորտները կարող են օգուտ քաղել շարունակական ուշադրությունից և ռազմավարական ամրապնդումից:

Գործընկերների կարողությունների զարգացման մոտեցումների հետ կապված ցուցանիշը ժամանակի ընթացքում մնում է համեմատաբար կայուն, բայց ցույց է տալիս փոքր նվազման միտում վերջին տարիներին: Թեև այն դեռ դրական է գնահատվում, սա կարող է արտացոլել.

- գործընկերների աճող ակնկալիքները կամ
- ավելի հարմարեցված կամ առաջադեմ կարողությունների զարգացման մոտեցումների անհրաժեշտությունը:

Համեմատելով 2020 և 2025 թվականները՝ նկատվում է կազմակերպական աճի և ամրապնդման հստակ օրինաչափություն, հատկապես՝

- գործընկերների կարիքներին արձագանքելու,
- գործընկերների մոտիվացիայի և ներգրավվածության
- և բաց, մասնակցային միջավայրերի ստեղծման ոլորտներում:

Սա ցույց է տալիս, որ Հիմնադրամը զգալիորեն զարգացել է իր գործընկերային մոդելի և դյուրացման մոտեցման մեջ:

Երկայնական տվյալները ցույց են տալիս, որ Հիմնադրամը կառուցել և պահպանել է ուժեղ, վստահության վրա հիմնված հարաբերություններ գործընկերների հետ հատկապես արձագանքողականության, ներառականության և ներգրավվածության ոլորտներում: Թեև որոշ ոլորտներ, ինչպիսիք են նորարարությունը, հաղորդակցությունը և կարողությունների զարգացումը, ցույց են տալիս փոքր տատանումներ, դրանք մնում են դրական միջակայքում և ներկայացնում են հետագա զարգացման հնարավորություններ, այլ ոչ թե թույլ կողմեր:

Ընդհանուր առմամբ՝ միտումն արտացոլում է առաջադեմ ամրապնդվող կազմակերպություն, որն ունակ է հարմարեցնելու իր մոտեցումները՝ միաժամանակ պահպանելով գործընկերների բավարարվածության և համագործակցության որակի բարձր մակարդակը ժամանակի ընթացքում:

Գործընկերության մոտեցումների լավագույն փորձը

Գործընկերության շրջանակում Հիմնադրամի հատուկ կարողությունների գնահատման հետ մեկտեղ՝ հարցվողներին խնդրել ենք նշել Հիմնադրամի այն երեք բնութագրերը, որոնք նրանք առավելապես գնահատում են: Արդյունքները ցույց են տալիս գործընկերների շրջանում առաջնահերթությունների հստակ փաթեթ:

Ամենահաճախ նշված բնութագրերն էին.

- Ֆեմինիստական շարժման աջակցությունը Հայաստանում (նշվել է 14 անգամ),
- Գործընկերության բաց ոճը՝ առանց ավելորդ բյուրոկրատիայի (նշվել է 8 անգամ),
- Դրամաշնորհների տրամադրման ճկունությունը (նշվել է 7 անգամ),
- Հավասարության սկզբունքը բոլոր գործընկերների նկատմամբ, ինչպես նաև առավել խոցելի և տաբու թեմաների շուրջ խոսելու հնարավորությունը (յուրաքանչյուրը նշվել է 6 անգամ):

Այս արդյունքները հուշում են, որ Հիմնադրամի և նրա գործընկերների միջև գործընկերությունը կառուցողական, վստահության և համագործակցային մոտեցման վրա հիմնված է, որը նպաստում է իմաստալից և սոցիալապես ազդեցիկ ծրագրերի արդյունավետ իրականացմանը:

Աղյուսակ 3. Մուրեցումներ, որոնք գրավել են գործընկերներին Հիմնադրամի հետ իրենց գործընկերության մեջ

Դ ա ս	Հիմնադրամի գրավիչ մուտեցումները 2025	Հիմնադրամի գրավիչ մուտեցումները 2024	Հիմնադրամի գրավիչ մուտեցումները 2023	Հիմնադրամի գրավիչ մուտեցումները 2022	Հիմնադրամի գրավիչ մուտեցումները 2020
1	Ֆեմինիստական շարժման աջակցությունը Հայաստանում	Գործընկերության բաց ոճը՝ առանց ավելորդ բյուրոկրատիայի	Հնարավորության տրամադր. սոցիալապես արգելված թեմաների և հարցերի շուրջ խոսելու համար	Ֆեմինիստական շարժման աջակց. Հայաստանում	Ֆեմինիստական շարժման աջակց. Հայաստանում
2	Գործընկերության բաց ոճը՝ առանց ավելորդ բյուրոկրատիայի	Ֆեմինիստական շարժման աջակց. Հայաստանում	Ֆեմինիստական շարժման աջակցությունը Հայաստանում	Բյուրոկրատիայի բացակայություն - բաց համագործակցություն	Բյուրոկրատիայի բացակայություն - բաց համագործակցություն
3	Դրամաշնորհների տրամադր. ճկունություն	Հավասարության սկզբունքի կիրառում	Բյուրոկրատիայի բացակայություն - բաց համագործակցություն	Մարզային նախաձեռնությունների աջակցություն	Գործընկերների կարողությունների զարգացում
5		Դրամաշնորհների տրամադր. ճկունություն	Հավասարության սկզբունքի կիրառում	Հավասարության սկզբունքի կիրառում	Դրամաշնորհների տրամադր. ճկունություն
5		Գործընկերների կարողությունների զարգացում	Մարզային նախաձեռնությունների աջակցություն		Ֆինանսական աջակցության տրամադր.
6			Ֆինանսավորման և դրամաշնորհների կառավարման ճկունություն		

Տարիների համեմատությունը (տե՛ս Աղյուսակ 3) ցույց է տալիս, որ Հիմնադրամը թե՛ պահպանել է հիմնական արժեքները, և թե՛ աստիճանաբար դիվերսիֆիկացրել է իր գրավիչ մոտեցումները՝ արտացոլելով զարգացող և արձագանքող գործընկերային մոդելը:

Բոլոր տարիների ընթացքում հստակ և հետևողական միտում է Հիմնադրամի ուժեղ կապը Հայաստանում ֆեմինիստական շարժման աջակցության հետ: Այս բնութագիրը մնացել է կենտրոնական՝ 2025թ. զբաղեցնելով առաջին տեղը և նախորդ տարիներին (2024, 2023, 2022 և 2020) զբաղեցնելով առաջատար կամ գրեթե առաջատար դիրքեր: Այս շարունակականությունն ընդգծում է Հիմնադրամի կայուն ինքնությունը և երկարաժամկետ հանձնառությունը ֆեմինիստական արժեքներին և սոցիալական փոփոխություններին:

Մեկ այլ հետևողականորեն գնահատված հատկանիշ է Հիմնադրամի բաց և ոչ բյուրոկրատական գործընկերության ոճը: 2025թ. զբաղեցնելով երկրորդ տեղը և 2024թ.՝ առաջինը, ինչպես նաև 2023, 2022 և 2020 թվականներին առկա լինելով՝ այս բնութագիրն արտացոլում է ճկուն, վստահության վրա հիմնված համագործակցության կայուն գնահատումը: Ավելորդ բյուրոկրատիայի բացակայությունը շարունակում է մնալ որոշիչ ուժեղ կողմ, որը հեշտացնում է արդյունավետ և հարմարավետ գործընկերությունը:

2023թ. նկատվում է նշանակալի տեղաշարժ. սոցիալապես արգելված թեմաների շուրջ խոսելու հնարավորությունը դառնում է առաջատար բնութագիր: Սա ցույց է տալիս, որ այդ փուլում գործընկերները հատկապես գնահատել են Հիմնադրամի դերը որպես բաց երկխոսության և զգայուն ու քիչ լուսաբանված հարցերի լուծման հարթակ: Թեև այս հատկանիշը հետագա տարիներին չի հայտնվում որպես առաջատար, այն մնում է Հիմնադրամի ավելի լայն ներառական և ֆեմինիստական մոտեցման մեջ:

Ժամանակի ընթացքում դրամաշնորհների տրամադրման և ֆինանսավորման կառավարման ճկունությունը ձեռք է բերել աճող կարևորություն: Թեև այն ավելի վաղ տարիներին ավելի ցածր էր (օրինակ՝ 2020 և 2022), այն 2025թ. տեղափոխվել է ավելի նշանակալի դիրք (երրորդ տեղ) և հայտնվել է նաև 2024 և 2023 թվականներին: Այս միտումը հուշում է գործընկերների կարիքներին և փոփոխվող համատեքստերին արձագանքող հարմարվողական ֆինանսավորման մեխանիզմների աճող գնահատման մասին:

Հավասարության սկզբունքը և մարզային նախաձեռնությունների աջակցությունը նույնպես ի հայտ են եկել որպես կարևոր հատկանիշներ՝ հատկապես 2023 և 2024թթ.: Դրանց առկայությունը ցույց է տալիս ուժեղացված ուշադրություն ներառականության, արդարության և ապակենտրոնացման վրա, ինչը համահունչ է բազմազան խմբերին ներգրավելու և մայրաքաղաքից դուրս ընդգրկումն ընդլայնելու ավելի լայն ջանքերին:

Բացի այդ՝ գործընկերների կարողությունների զարգացումը հայտնվում է որպես գնահատված մոտեցում ավելի վաղ տարիներին (հատկապես 2020 և 2024թթ), թեև այն ավելի նոր տվյալներում ավելի քիչ է առանձնանում: Սա կարող է ցույց տալ, որ թեև կարողությունների զարգացումը մնում է կարևոր, այն ավելի ու ավելի է դիտվում որպես չիմնադրամի աջակցության այլ ասպեկտների մեջ ինտեգրված, այլ ոչ թե որպես ինքնուրույն հատկանիշ:

Ընդհանուր առմամբ՝ ժամանակային վերլուծությունը ցույց է տալիս, որ չիմնադրամին հաջողվել է հավասարակշռել շարունակականությունն ու հարմարվողականությունը: չիմնական արժեքները, ինչպիսիք են ֆեմինիստական շարժման աջակցությունը և բաց, ոչ բյուրոկրատական գործընկերությունների պահպանումը, մնացել են հետևողականորեն ուժեղ և կենտրոնական իր ինքնության համար:

Միևնույն ժամանակ, չիմնադրամը զարգացել է՝ ավելի մեծ շեշտ դնելով ճկունության, ներառականության և առաջացող կարիքներին արձագանքելու վրա՝ ներառյալ արգելված թեմաներին անդրադառնալու, հավասարության խթանման և մարզային գործընկերների ներգրավման աջակցությունը: Այս էվոլյուցիան արտացոլում է հասունացող գործընկերային մոդել, որտեղ հիմնարար սկզբունքները պահպանվում են, մինչդեռ նոր չափումներ են ներառվում՝ ի պատասխան գործընկերների ակնկալիքների և ավելի լայն սոցիալական համատեքստի:

Ի՞նչն է մոտիվացնում գործընկերներին

Պատասխանները ցույց են տալիս, որ գործընկերների մոտիվացիան՝ դիմելու Հայաստանում կանանց հիմնադրամի (ՀԿՀ) դրամաշնորհային հնարավորություններին զգալիորեն դուրս է գալիս միայն ֆինանսական աջակցությունից: Թեև ֆինանսավորումը կարևոր է, հատկապես դոնորական հնարավորությունների նեղացման համատեքստում, շատ հարցվողներ ընդգծել են, որ ՀԿՀ-ն ընկալվում է որպես կազմակերպական կայունության հուսալի աղբյուր: Ինչպես նշել է հարցվողներից մեկը. «Հատկապես վերջին տարիներին, աջակցության ծրագրերի նվազմանը զուգահեռ, Կանանց հիմնադրամը կարևոր աջակցություն է եղել կազմակերպության գործունեությունը պահպանելու համար»: Այսպիսով, կազմակերպությունները հիմնականում դրդված են չիմնադրամի արժեքային, ճկուն և գործընկերության վրա հիմնված մոտեցմամբ:

Պատասխանների մեջ հատկապես կարևոր թեմա է կազմակերպական և ֆեմինիստական արժեքների համապատասխանությունը: Բազմաթիվ հարցվողներ ընդգծել են, որ իրենց առաքելությունները սերտորեն համապատասխանում են չիմնադրամի առաքելությանը՝ նկարագրելով ՀԿՀ-ն ոչ միայն որպես դոնոր, այլև որպես գաղափարական դաշնակից:

Մի կազմակերպություն բացատրել է. «Հայաստանում կանանց հիմնադրամի ծրագրերին դիմելու մեր հիմնական մոտիվացիան հիմնված է ինչպես արժեքների համապատասխանության, այնպես էլ ռազմավարական գործընկերության կարևորության վրա»: Մեկ այլ հարցվող ավելի ուղղակի ամփոփել է սա՝ նշելով. «Մեր առաքելությունները լիովին համընկնում են»: Մի քանի կազմակերպություններ նաև ընդգծել են ՀԿՀ-ի սկզբունքային ֆեմինիստական դիրքորոշման կարևորությունը՝ հատկապես մարգինալացված խմբերի վերաբերյալ: Մեկ հարցվող շեշտել է, որ «Հիմնադրամը Հայաստանում այն սակավաթիվ կազմակերպություններից է, որոնք բացահայտ անդրադառնում են քվիր և LFSB+ կանանց իրավունքներին՝ որպես կանանց իրավունքների ավելի լայն օրակարգի մաս»:

Մեկ այլ կարևոր մոտիվացնող գործոն է Հիմնադրամի ճկունությունը և գործընկերության վրա հիմնված մոտեցումը: Հարցվողները բազմիցս անդրադարձել են ՀԿՀ-ին որպես հարգալից, հասկացող և ոչ բյուրոկրատ դոնորի: Օրինակ, մի կազմակերպություն նշել է. «Հայաստանում կանանց հիմնադրամի հետ աշխատելը բավականին ճկուն է... մենք ազատ ենք որոշումներ կայացնելու հարցում»: Նմանապես, մեկ այլ հարցվող ընդգծել է. «Առկա է հարգանքի բացառիկ մթնոլորտ, որը միայն մոտիվացնում է մեզ շարունակել աշխատել»:

Դրամաշնորհային գործընթացի պարզեցված և մատչելի բնույթը նույնպես հաճախ նշվում էր որպես առանցքային առավելություն՝ հատկապես փոքր կազմակերպությունների համար: Մի պատասխան ընդգծել է, որ պարզեցված և մատչելի դրամաշնորհային դիմումների գործընթացը և համաչափ հաշվետվությունների պահանջները թույլ են տալիս կազմակերպություններին կենտրոնանալ բովանդակային աշխատանքի վրա՝ ավելորդ բյուրոկրատիայի փոխարեն: Մեկ այլ հարցվող ավելի ոչ ֆորմալ ամփոփել է սա. «Համախոհ գործընկեր, ֆեմինիստական կազմակերպություն, առանց ավելորդ բյուրոկրատիայի»: Այսպիսով, գործընկերները նշել են, որ այս ճկունությունը թույլ է տալիս նրանց ավելի շատ կենտրոնանալ բովանդակային աշխատանքի և համայնքային ազդեցության վրա, այլ ոչ թե վարչական բեռի վրա:

Շատ կազմակերպություններ նաև ընդգծել են ՀԿՀ-ի հետ համագործակցության միջոցով ստեղծված աջակցող և համայնքային միջավայրի կարևորությունը: Հարցվողները Հիմնադրամը նկարագրել են ոչ միայն որպես դոնոր, այլև որպես վստահելի գաղափարական և ռազմավարական գործընկեր, որը տրամադրում է հուզական աջակցություն, ցանցային հնարավորություններ, փոխադարձ ուսուցում, կարողությունների զարգացում և պատկանելության զգացում ավելի լայն ֆեմինիստական համայնքում: Անորոշության, սոցիալական բևեռացման և արժեքային ճգնաժամերի համատեքստում մի քանի կազմակերպություններ ընդգծել են, որ համերաշխության և ընդհանուր նպատակի զգացումն ինքնին ծառայում է որպես մոտիվացիայի հիմնական աղբյուր:

Վերջապես, մի քանի հարցվողներ ընդգծել են, որ ՀԿՀ-ի դրամաշնորհները հնարավորություններ են ստեղծում նորարարական և ազդեցիկ նախաձեռնությունների համար, որոնք այլապես կարող էին մնալ չիրականացված: Մի կազմակերպություն հայտնել է. «Մենք դիմում ենք, քանի որ սա միակ հնարավորությունն է մեզ համար արագ և արդյունավետ իրականացնելու մեր գաղափարները»: Հարցվողները գնահատել են ՀԿՀ-ի բաց լինելը նոր ձևաչափերի, մշակութային զգայուն մոտեցումների, գեղարվեստական մեթոդների և փոքրածավալ, բայց ազդեցիկ համայնքային միջամտությունների նկատմամբ: Մեկ այլ հարցվող ընդգծել է, որ «ՀԿՀ-ն հայտարարում է հեղափոխական թեմաներ և ճկուն ձևաչափեր, որոնք այլ կազմակերպություններ չեն առաջարկում»: Այսպիսով, ՀԿՀ-ն դիտարկվել է որպես այն սակավաթիվ հնարավորություններից մեկը, որոնք թույլ են տալիս արագ և արդյունավետ իրականացնել կանանց կարիքներին և տեղական իրողություններին ուղղակիորեն արձագանքող գաղափարներ:

Ծրագրերի գնահատում

Ծրագրերի արդյունավետություն

Հարցվողների ճնշող մեծամասնությունը (95.5%) Կանանց հիմնադրամի աջակցությամբ իրականացված ծրագրերը գնահատել է որպես արդյունավետության և ազդեցության բարձր մակարդակ ունեցող: Գործընկեր կազմակերպությունների կողմից տրամադրված բացատրությունները ցույց են տալիս, որ այս գնահատականը կապված է ոչ միայն առանձին ծրագրերի ուղղակի արդյունքների, այլև Հիմնադրամի ավելի լայն ազդեցության հետ կազմակերպական կայունության, համայնքային ներգրավվածության և երկարաժամկետ զարգացման գործընթացների վրա:

Շատ հարցվողներ ընդգծել են, որ Հիմնադրամի աջակցությունը հատկապես կարևոր է եղել բազմաթիվ ճգնաժամերով և անկայունությամբ նշանավորված վերջին տարիներին: Մի շարք դեպքերում կազմակերպությունները նշել են, որ առանց այդ աջակցության նրանք հնարավոր է՝ չկարողանային շարունակել իրենց գործունեությունը: Ֆինանսական օգնությունից բացի՝ գործընկերները բարձր են գնահատել Հիմնադրամի ճկուն, արձագանքող և վստահության վրա հիմնված մոտեցումը, որը թույլ է տալիս կազմակերպություններին հարմարեցնել գործունեությունը առաջացող կարիքներին և պահպանել իրենց աշխատանքի շարունակականությունը:

Պատասխաններում կրկնվող թեմա է ծրագրերի ներդրումը կազմակերպական ամրապնդման և կարողությունների զարգացման գործում:

Կազմակերպությունները հայտնել են թիմային աշխատանքի բարելավման, համագործակցության մեխանիզմների ամրապնդման, մասնագիտական հմտությունների բարձրացման և ծրագրերի կառավարման ու դոնորների հետ

հարաբերություններում վստահության աճի մասին: Որոշ փոքր կամ նոր կազմակերպությունների համար Հիմնադրամի հետ համագործակցությունը եղել է դրամաշնորհների կառավարման և հաշվետվությունների առաջին կարևոր փորձը, որը հետագայում նպաստել է ավելի մեծ վստահելիության և լրացուցիչ ֆինանսավորման հնարավորությունների հասանելիությանը: Մի քանի հարցվողներ նաև ընդգծել են կազմակերպական դիմակայունության համար ստացված աջակցության ռազմավարական նշանակությունը՝ ներառյալ աշխատակիցների աշխատավարձերի պահպանումը, ավելի անվտանգ աշխատանքային պայմանների ստեղծումը կամ նույնիսկ՝ կազմակերպական տարածքի ապահովումը:

Շահառուների մակարդակով հարցվողները նկարագրել են ծրագրերին մասնակցող կանանց և աղջիկների շրջանում դրական փոփոխությունների լայն շրջանակ: Դրանք ներառում էին ինքնավստահության բարձրացում, համայնքային ավելի ակտիվ մասնակցություն, հոգեսոցիալական բարեկեցության բարելավում, բռնության և խտրականության մասին բացահայտ խոսելու մեծ պատրաստակամություն, ինչպես նաև նոր հմտությունների և սոցիալական կապերի զարգացում: Հատկապես ուժեղ օրինակներ են տրամադրել Արցախից բռնի տեղահանված կանանց հետ աշխատող կազմակերպությունները, որոնց ծրագրերը համատեղում էին հումանիտար օգնությունը երկարաժամկետ հզորացման մոտեցումների հետ՝ ներառյալ հոգեսոցիալական աջակցությունը, տնտեսական նախաձեռնությունները, ստեղծագործական գործունեությունը և համայնքային ինտեգրման ջանքերը:

Մի քանի կազմակերպություններ նաև ընդգծել են Հիմնադրամի աջակցության կարևորությունը անվտանգ և ներառական տարածքների ստեղծման գործում, հատկապես խոցելի և մարգինալացված խմբերի համար՝ ներառյալ LFS+ և քվիր կանայք: Հարցվողները նշել են, որ նման նախաձեռնությունները մասնակիցներին հնարավորություն են տվել բացահայտ քննարկելու իրենց փորձը, մասնագիտական աջակցություն ստանալու և զգալու վստահելի համայնքային միջավայրի մաս, ինչը հաճախ անհասանելի է մարզային պայմաններում:

Մեկ այլ հաճախ ընդգծված ասպեկտ էր ծրագրերի ներդրումը համայնքային մոբիլիզացիայի և հանրային դիսկուրսի մեջ: Հարցվողները նկարագրել են, թե ինչպես են նախաձեռնություններն օգնել հանրային քննարկումներ անել զգայուն թեմաների շուրջ, ինչպիսիք են ընտանեկան բռնությունը, կնասպանությունը, բնապահպանական արդարությունը և գենդերային հավասարությունը, ինչպես նաև հիմք են ստեղծել ապագա ադվոկացիոն և դրամահավաք ջանքերի համար: Որոշ դեպքերում ծրագրերի արդյունքները տարածվել են համայնքային ավելի լայն ներգրավվածության և նույնիսկ տեղական քաղաքացիական մասնակցության գործընթացների վրա:

Միևնույն ժամանակ, հարցվողների փոքր մասն ընտրել է «միջին» գնահատական, թեև նրանք պարզաբանել են, որ դա չի արտացոլում Հիմնադրամից կամ ծրագրի իրականացման որակից դժգոհություն: Ավելի շուտ, նրանք ընդգծել են իրատեսական ընկալումը, որ խորը սոցիալական և վարքային փոփոխությունները ժամանակ են պահանջում և միշտ չէ, որ անմիջապես դիտելի են մի քանի կարճաժամկետ նախաձեռնություններից հետո: Այնուամենայնիվ, նույնիսկ այս հարցվողները ընդունել են կանանց հետաքրքրության նկատելի աճը ինքնազարգացման, հզորացման և համայնքային նախաձեռնություններին մասնակցության նկատմամբ:

Ընդհանուր առմամբ՝ պատասխանները հուշում են, որ կանանց հիմնադրամի աջակցությունն ընկալվում է ոչ միայն որպես ծրագրային ֆինանսավորում, այլև որպես կարևոր նպաստող գործոն, որը նպաստում է կազմակերպական կայունությանը, ֆեմինիստական շարժման կառուցմանը, համայնքային դիմակայունությանը և Հայաստանում կանանց ու մարզինալացված խմբերի երկարաժամկետ հզորացմանը:

Հաջողության պատմություններ

Հավաքված հաջողության պատմությունները ցույց են տալիս, որ կանանց հիմնադրամի աջակցությամբ իրականացված ծրագրերը փոփոխություններ են առաջացրել բազմաթիվ մակարդակներում՝ անձնական, կազմակերպական, համայնքային և շարժման կառուցման՝ միաժամանակ ընդգծելով երկարաժամկետ, վստահության վրա հիմնված և համատեքստային զգայուն մոտեցումների կարևորությունը: Պատմությունների մեջ ամենատեսանելի օրինաչափություններից մեկը անվտանգ և աջակցող տարածքների ստեղծումն է, որտեղ կանայք իրենց ունակ են զգացել բացահայտ խոսելու բռնության, տրավմայի, խտրականության, տեղահանության կամ այլ խորապես անձնական փորձառությունների մասին, որոնք նախկինում մնացել էին լռության մեջ՝ հատկապես պահպանողական կամ փոքր համայնքային համատեքստերում:

